



«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը հայտարարում է խոտաբույսեր զարգացման համար (HEGO) ծրագրի շրջանակներում կազմակերպվող խոտաբույսերի վերաբերյալ 400-ժամյա դասընթացի մասնակցության մրցույթ: Դասընթացը կմեկնարկի սույն թվականի հուլիս ամսին՝ Երևանում, տևողությունը՝ 4 ամիս: Դասընթացի վերջում ԵՄ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության գործողությունների ծրագրի կողմից կտրամադրվի դասընթացի մասնակցության սերտիֆիկատ:

Դասընթացը բաժանվում է 280 ժամ գործնական և 120 ժամ տեսական փուլերի, տեսական մոդուլների շրջանակներում նախատեսվում է այցելություններ մարզեր: Դասընթացի ծրագիրը ստորև՝

❖ Տեսական՝

- ✓ խոտաբույսերի պահպանում՝ 15 ժամ
- ✓ խոտաբույսերի տեսակների հարակայուն օգտագործում՝ 15 ժամ
- ✓ խոտաբույսերի մշակում և բազմացում՝ 25 ժամ
- ✓ խոտաբույսային արտադրանքի վերամշակում՝ 20 ժամ
- ✓ խոտաբույսային բիզնեսի կառավարում՝ 45 ժամ

❖ Գործնական՝

- ✓ խոտաբույսերի հարակայունություն՝ 70 ժամ
- ✓ խոտաբույսային արտադրանքի վերամշակում՝ 70 ժամ
- ✓ Մարքեթինգ՝ 70 ժամ
- ✓ Բիզնեսի ֆինանսավորում՝ 70 ժամ

Ընտրված 15 մասնակիցներին կտեղեկացվի դասընթացի մեկնարկի մասին առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում:

Դասընթացի մասնակցության հայտը լրացնելու համար խնդրում ենք անցնել հետևյալ հղումով՝

<https://forms.gle/PKQtKNUXNXDFNwQs5>

Ծրագրի մասին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» CARD հիմնադրամի և HEGO ծրագրի պաշտոնական կայքերից՝

<http://card.am/en/categories/1/projects/25>

<https://hego-project.com/>